ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

ԳՈՐԾՈՒՂՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՄԱՍԻՆ

1. **Անունը, ազգանունը, զբաղեցրած պաշտոնը**

Անի Հունանյան, ֆիսկալ ռիսկերի կառավարման վարչության առանձին գործառույթներ համակարգող խորհրդական

2. **Գործուղման վայրը և ժամկետները.**

Ք. Բրյուսել, Բելգիայի Թագավորություն, 2024 թվականի սեպտեմբերի 22-ից մինչև սեպտեմբերի 26-ը ներառյալ

3. **Հրավիրող կողմը.**

Ամերիկայի Միացյալ Նահանգների միջազգային զարգացման գործակալության տնտեսական զարգացման, կառավարման և ձեռնարկությունների աճ (EDGE) ծրագրի կապալառու «International Development Group» ՍՊԸ

4. **Գործուղման նպատակը (աշխատանքային ո՞ր խնդրի լուծման համար էր նախատեսված գործուղումը).**

Համաժողովը նպատակ ուներ շահառու պետությունների պետական գնումների համակարգի և պետություն-մասնավոր գործընկերության մեխանիզմների ուղղություններով ապահովելու հարթակ, որտեղ կքննարկվեին համակարգերի արդիականացման հնարավորությունները, կբացահայտվեին հիմնական խնդիրները և կստեղծվեին հնարավորություններ՝ լավագույն փորձի փոխանակման համար:

Հիմնական շահառու երկրներն էին Արևմտյան Բալկանյան երկրները, ինչպես նաև Հայաստանը, Մոլդովան և Ուկրաինան:

5. **Քննարկված թեմաները.**

Բանախոսներն ու պանելիստները EC DG GROW-ի, Համաշխարհային բանկի, SIGMA/OECD-ի, ԱՀԿ-ի, EBRD-ի և USAID EDGE ծրագրի ներկայացուցիչներ էին, ինչպես նաև Խորվաթիայի, Լիտվայի, Լեհաստանի և Ռումինիայի պետական գնումների և ՊՄԳ ոլորտների իշխանությունների ներկայացուցիչներ:

Համաժողովը ներառում էր պանելային քննարկումներ՝ ոլորտների փորձառու մասնագետների և պաշտոնյաների մասնակցությամբ, ինչպես նաև շահառու երկրների շնորհանդեսներ՝ ներկայացվող երկրներում պետական գնումների և ՊՄԳ համակարգերի, առավելությունների, գործող ծրագրերի, առկա խնդիրների և հնարավորությունների մասին:

6. Հանդիպումները, ելույթները, բարձրացված կամ քննարկված հարցերը.

Բացի 5-րդ կետով ներկայացված թեմաների շրջանակներում քննարկումներին մասնակցությունից և փորձի փոխանակումից, համաժողովի շրջանակներում հանդես եմ եկել շնորհանդեսով, որը նպատակ ուներ ներկայացնելու Հայաստանում պետություն-մասնավոր գործընկերության ծրագրերը, գործող քաղաքականությունը, իրավական կարգավորման շրջանակը, ՊՄԳ պայմանագրերից բխող ֆիսկալ ռիսկերի գնահատման մեխանիզմները, շահագրգիռ մարմինների գործառույթները, առկա մարտահրավերները և հնարավորությունները:

7. Հանդիպման կամ հավաքի ժամանակ ընդունված որոշումները, պայմանավորվածությունները, ստորագրված փաստաթղթերը.

Գործման ընթացքում ձեռք են բերվել մի շարք կապեր այլ երկրների գործընկերների և Ֆիսկալ ռիսկերի կառավարման վարչության գործառույթների շրջանակում գործունեություն իրականացնող փորձագետների հետ:

8. Առաջարկությունները, դրանց ընթացք տալու վերաբերյալ առաջարկները՝ եղանակը, ձևը, ժամկետները, պատասխանատուները, ակնկալվող արդյունքները.

Գործուղման ընթացքում ձեռք բերված տեղեկատվությունը և գիտելիքները նախատեսվում է փոխանցել ստորաբաժանման, նպատակահարմարության դեպքում նաև նախարարության հետաքրքրված աշխատակիցներին: Ձեռք բերված համագործակցությունները կնպաստեն նաև Ֆիսկալ ռիսկերի կառավարման վարչության լիազորությունների շրջանակում՝ ՊՄԳ պայմանագրերից բխող ֆիսկալ ռիսկերի գնահատման մեխանիզմների կատարելագործմանը, իսկ ձեռք բերված գիտելիքները և տրամադրված մոդելները՝ ստորաբաժանման ընթացիկ աշխատանքներին և գործառույթների բարելավմանը:

9. Ստորագրությունը, ամսաթիվը.

Անի Հունանյան

02.10.2024թ.